ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ 101 ԱՄՅԱԿ

06.12.2019 10:35

Այսօր տոնում ենք Փաստաբանության ստեղծման 101 ամյակը։

Փաստաբանությունը, որպես իրավաբանական օգնություն ապահովող ինստիտուցիոնալ համակարգ, Հայաստանում առաջին անգամ ներդրվել է 1918թ. Հայաստանի առաջին Հանրապետության ժամանակաշրջանում։

ՈՒղիղ 101 տարի առաջ, 1918թ. դեկտեմբերի 6-ին, Հայաստանի առաջին հանրապետության խորհրդի (պառլամենտի) կողմից ընդունված Դատական հաստատությունների կանոնադրության 9-րդ բաժնի 2-րդ գլուխն ամբողջությամբ նվիրվել էր փաստաբաններին, որոնք այն ժամանակ կոչվում էին երդվյալ հավատարմատարներ։ Այս նորմատիվ իրավական ակտով կանոնակարգվել է փաստաբանների կազմակերպության կառուցվածքը, կառավարման մարմինները, փաստաբանների վարքագծի կանոնները և մի շարք այլ հարաբերություններ։

Շնորհավորում եմ Հայաստանի Հանրապետության բոլոր փաստաբաններին «Փաստաբանի օրվա» կապակցությամբ։

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })